# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ «ՏԵՔՆՈԼՈՋԻ ՏՐԱՆՍՖԵՐ» ԱՍՈՑԻԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն և «Տեքնոլոջի Տրանսֆեր» Ասոցիացիա» իրավաբանական անձանց միությունը (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և նպատակ ունենալով.

նպաստելու Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն գործունեությանը, գիտական հետազոտությունների և նոր տեխնոլոգիաների զարգացման հեռանկարային ուղղությունների, առևտրայնացման ներուժ ունեցող գիտատեխնիկական մշակումների հայտնաբերմանը,

վերհանելու ոլորտի զարգացման խոչընդոտները և խթանելու ներդրումները գիտական հետազոտությունների արդյունքների առևտրայնացման և նոր տեխնոլոգիաների ստեղծման ու ներդրման բնագավառում,

## ՀԱՄԱՁԱՅՆԵՑԻՆ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ.

Կողմերը պայմանավորվում են սույն Համաձայնագրին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան և իրենց իրավասությունների շրջանակներում համագործակցել հետևյալ ուղղություններով.

Հոդված 1. Հայաստանյան գիտատեխնիկական մշակումների և նոր տեխնոլոգիաների, ինչպես նաև Հայաստանի գիտատեխնիկական ներուժի ներկայացում միջազգային ասպարեզում՝ համապատասխան ցուցահանդեսների, շնորհանդեսների, մասնագիտացված էլեկտրոնային կայքերի և այլ հնարավորությունների օգտագործմամբ:

Հոդված 2. Հայաստանյան գիտատեխնիկական մշակումների և նոր տեխնոլոգիաների հանդեպ հետաքրքրություն դրսևորող օտարերկրյա

կազմակերությունների և անձանց այցերի շրջանակներում հայաստանյան համապատասխան կազմակերպությունների ու անձանց հետ գործնական հանդիպումների կազմակերպում:

Հոդված 3. Հայաստանի Հանրապետությունում գիտական կազմակերպությունների, գիտահետազոտական խմբերի, անհատ հետազոտողների և ներդրողների համար գործնական հանդիպումների, կլոր սեղանների, շնորհանդեսների կազմակերպում:

Հոդված 4. Հայաստանյան և օտարերկրյա պետությունների գիտական կազմակերպությունների, գիտահետազոտական խմբերի, անհատ հետազոտողների համար Հայաստանի Հանրապետությունում մտավոր սեփականության պաշտպանության, գյուտերի և գիտատեխնիկական մշակումների արտոնագրման, հեղինակային իրավունքի և այլ խնդիրների վերաբերյալ խորհրդատվության տրամադրում:

Հոդված 5. Գիտելիքի առևտրայնացման ոլորտի Հայաստանյան փորձագետների շտեմարանի ձևավորում:

Հոդված 6. Հայաստանյան գիտական կազմակերպությունների, գիտահետազոտական խմբերի, անհատ հետազոտողների կողմից կատարված գիտատեխնիկական մշակումների և նոր տեխնոլոգիաների առաջարկի շտեմարանի ձևավորում:

Հոդված 7. Հայաստանի և օտարերկրյա պետությունների գիտական կազմակերպությունների, գիտահետազոտական խմբերի, անհատ հետազոտողների համատեղ հետազոտությունների և գիտատեխնիկական մշակումների իրականացման աջակցություն:

Հոդված 8. Կողմերը պարտավորվում են առանց փոխադարձ համաձայնության երրորդ կողմին չտրամադրել նախապես գաղտնի համարվող տեղեկությունը:

Հոդված 9. Կողմերի հարաբերությունները սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

Հոդված 10. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն առանձին

արձանագրությամբ: Արձանագրությունը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը և ուժի մեջ կմտնի դրանում սահմանված կարգով:

Հոդված 11. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Սույն Համաձայնագիրը կնքվում է երեք տարի ժամկետով և ինքնաբերաբար կերկարաձգվի յուրաքանչյուր հաջորդ երեք տարվա համար, եթե Կողմերից որևէ մեկը սույն Համաձայնագրի գործողության ժամկետի ավարտից երեք ամիս առաջ մյուս Կողմին գրավոր չծանուցի այն դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է հայերենով, Երևանում, 2009 թվականի հոկտեմբերի 12 - ին, երկու հավասարազոր բնօրինակով:

**Կողմերի իրավաբանական հասցեները**

| | |
|---|---|
| Օրբելի եղբ. փ. 22,<br>Երևան 0028 | Չարենցի 17<br>Երևան 0025 |
| **Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի կողմից** | **«Տեքնոլոջի Տրանսֆեր» Ասոցիացիա» իրավաբանական անձանց միության կողմից** |
| նախագահ՝<br>---------- Սամվել Հարությունյան<br>Կ. Տ. | խորհրդի նախագահ՝<br>---------- Միքայել Աբովյան<br>Կ. Տ. |